

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի սեպտեմբերի 20-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի նախագահութեամբ, տեղի ունեցաւ Էջմիածին քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցու նորակառոյց զանգակատան բացումը:

Առաւօտեան ժամը 11.00-ին Ս. Աստուածածին եկեղեցու առջև հոգեւորականների և ուսանողների թափորը խուռներամ բազմութեան ներկայութեամբ դիմաւորեց Հայոց Հայրապետին, որին ուղեկցում էին հիւրաբար Մայր Աթոռում գտնուող Թուրքիայի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանը, Տ. Տիրան արքեպս. Ներսոյեանը՝ Նիւ Եորքից, Կենտրոնական Եւրոպայի հայրապետական պատուիրակ Տ. Մեսրոպ եպս. Գրիգորեանը, եկեղեցու բարերարուհի ազնիւ Տիկին Տորիս Զննոզեանը՝ իր դուստրերով և փեսաներով, բազմաթիւ հիւրեր Արգենտինայից, Բելգիայից և այլ երկրներից:

Վեհափառ Հայրապետի հետ խմբով ասուած «Հայր մեր»-ից յետոյ սկսուեց նորակառոյց զանգակատան բացման արարողութիւնը: Այնուհետև Նորին Սրբութիւնը և բարերարուհի Տիկին Տորիս Զննոզեանը կտրեցին ժապաւէնը բուռն ծափահարութիւնների ներքոյ, որից յետոյ զանգերը ղօղանջեցին, և Վեհափառ Հայրապետը առաջնորդուեց եկեղեցի՝ ներկայ լինելու սուրբ պատարագի արարողութեանը: Օրուայ պատարագիչն էր Արգենտինայի հայոց առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթեանը:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Աստուածածին եկեղեցու վանահայր Տ. Յովսէփ քահանայ Յակոբեանը հանդէս եկաւ ողջոյնի և շնորհակալութեան խօսքով ու հրաւիրեց Վեհափառ Հայրապետին տալու իր հայրապետական օրհնութիւնը ներկայ հաւատացեալ ժողովրդին:

Իր խօսքում Հայոց Հայրապետը նախ դրուատանքի խօսքեր ասաց նուիրատու Տիկին Տորիս Զննոզեանին և ապա գնահատեց վանահայր Յովսէփ քահանայի բարեխիղճ ու նուիրուած աշխատանքը:

Ս. պատարագի աւարտին կատարուեց հոգեհանգստեան պաշտօն՝ ի Տէր հանգուցեալ բարերար Տիար Վահէ Զննոզեանի յիշատակին:

Նորին Սրբութիւնը հրաժեշտ տուեց ներկայ հաւատացեալ ժողովրդին, որը հոգեկան մխիթարութեամբ ճանապարհ դրեց Հայոց Հայրապետին բուռն ծափահարութիւններով:

Նոյն օրը, ժամը 14.00-ին, Հայոց Հայրապետը, ի պատիւ նուիրատու հիւրերի, ճաշկերոյթ տուեց Մայր Աթոռի միաբանական սեղանատանը: Այս առթիւ Նորին Սրբութիւնը բարերարուհի Տիկին Տորիս Զննոզեանին և նրա երեք զաւակներին պարգևատրեց «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» շքանշանով:

Ս. Աստուածածին եկեղեցին գտնուում է Էջմիածին քաղաքում: Սկզբնապէս այն եղել է փայտակերտ: Կառուցուել է 1767 թուականին երջանկայիշատակ Տ. Տ. Սիմէոն Երևանցի Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով: Մէկ դար յետոյ այն քանդուել է և փոխարինուել քարակերտ կառոյցով:

Եկեղեցին հիմնովին վերանորոգուեց և օժտուեց մի նոր զանգակատնով Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա շնորհազարդ Հայրապետի կարգադրութեամբ և հովանաւորութեամբ, բարերարութեամբ Տէր և Տիկին Վահէ և Տորիս Զննոզեանների ի Պուէնոս Այրէս:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
24 սեպտեմբեր 1987 թ.